ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՊԸ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ

ՆՈՒՆԵ ԷԼԻԶԲԱՐՅԱՆ

Զբոսաշրջության ժամանակակից արդյունաբերությունը համաշխարհային տնտեսության բարձրարդյունավետ և առավել դինամիկ զարգացող ճյուղերից մեկն է: Սա գործարարության ոլորտ է, որը բավարարում է զբոսաշրջիկի պահանջմունքները և նշանակալի եկամուտ ապահովում զարգացող երկրներին և տարածաշրջաններին: Այսօր զբոսաշրջությունը շատ երկրներում դարձել է եկամտի աղբյուր, քանի որ ստացվող եկամուտների զգալի մասը մուտք է գործում պետբյուջե: Որոշ երկրների ազգային եկամտի 70-80%-ը ստացվում է զբոսաշրջությունից:

Այս ոլորտը արդյունաբերության գերակա ճյուղ է համարվում ինչպես աշխարհի բազմաթիվ երկրներում, այնպես էլ Հայաստանում: Մեր երկրում վերջին տասնամյակում նկատվում են զբոսաշրջության զարգացման առաջընթաց քայլեր, որոնք պայմանավորված են երկրի համապատասխան ներուժով և առանձնահատուկ պայմաններով:

Հայաստանում զբոսաշրջության զարգացման առանձնահատկությունների բացահայտման հարցը խիստ արդիական է. մեր երկիրը կարիք ունի լուրջ հետազոտությունների, որոնք երևան կհանեն տարածաշրջանի հնարավոր ներուժը և լայն հեռանկարներ կստեղծեն զբոսաշրջության արդյունաբերության զարգացման համար: Այսօր Հայաստանն իր սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակով բավական զիջում է զբոսաշրջության համաշխարհային կենտրոն համարվող շատ երկրների, մի բան, որ լուրջ խոչընդոտ է հիշյալ ճյուղի զարգացման համար: Այս կապակցությամբ նկատելի աշխատանքներ են տարվում նաև պետական քաղաքականության ոլորտում. 2004 թ. կիրառվում է «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքը, մշակվում են համապատասխան ռազմավարական հայեցակարգեր ու ծրագրեր, պետության կողմից կազմակերպվում և իրականացվում են բազմաթիվ միջոցառումներ՝ նվիրված ՀՀ-ում զբոսաշրջության զարգացմանը (օրինակ՝ մասնակցությունը միջազգային ցուցահանդեսներին, գովազդային նյութերի հեռարձակում և այլն)[1]:

Հայաստանում զբոսաշրջության ոլորտում իրականացվող պետական քաղաքականության հիմնական նպատակն է մեծացնել բնագավառի ներդրումը ազգային տնտեսության մեջ, ապահովել ՀՀ տարածաշրջանների համաչափ սոցիալ-տնտեսական զարգացումը, ինչը ոչ միայն կնպաստի մարզերում սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքների ձևավորմանն ու զարգացմանը, այլև բնակչության կենսամակարդակի բարձրացմանը: Այս ամենը կարելի է իրագործել՝ նպաստելով ներգնա և ներքին զբոսաշրջիկ-

[1] Տե՛ս «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենք, 17.12.2003 թ.:

ների թվաքանակի աճին, միաժամանակ ավելացնելով զբոսաշրջությունից ստացվող եկամուտները՝ առաջարկելով ավելի որակյալ և մատչելի զբոսաշրջային արդյունք։

Զբոսաշրջությունը ոչ միայն տնտեսության կարևորագույն ճյուղ է, այլ նաև մարդկանց կենսակերպի կարևոր բաղկացուցիչ։ Այն ներառում է մարդու հարաբերությունը շրջապատող արտաքին միջավայրի հետ։ Փաստորեն, զբոսաշրջությունը մարդկանց տեղաշարժվելու և այցելության վայրում մնալու գործընթացի հետ կապված հարաբերությունների, երևույթների և կապերի ամբողջությունն է։ Զբոսաշրջային ծառայությունների սպառողը զբոսաշրջիկն է և, այդ առումով, համարվում է զբոսաշրջության օբյեկտ։

Զբոսաշրջիկը զբոսաշրջային տուրի, արտադրանքի կամ ծառայությունների սպառողն է, տարածքի, բնակավայրի կամ երկրի ժամանակավոր այցելուն՝ անկախ քաղաքացիությունից, ազգությունից, սեռից, լեզվից և կրոնից, գտնվում է տվյալ վայրում 24 ժամից ոչ պակաս և օրաացուցային տարվա 12 ամսից ոչ ավելի ժամանակով[2] կամ գտնվում է սեփական երկրի տարածքում, բայց իր բնակության վայրից դուրս՝ նվազագույնը մեկ գիշերակաց, ճանապարհորդում է իր հաճույքի կամ ճանաչողական, առողջական, գործարար նպատակներով և չի զբաղվում այնպիսի գործունեությամբ, որի դիմաց վճարման աղբյուրը գտնվում է այցելության վայրում։ Զբոսաշրջությունն այժմ շատ երկրների տնտեսության հիմքն է կազմում՝ ազդելով դրանց տնտեսական աճի վրա։ Եթե 1950 թ. զբոսաշրջիկների թիվը ողջ աշխարհում հասնում էր 25 մլն-ի, ապա 21-րդ դարի սկզբին այս ցուցանիշն արդեն կազմում էր 663 մլն, որը վկայում է, որ զբոսաշրջության զարգացման տեմպերը գերազանցում են ցանկացած այլ ճյուղի աճի տեմպերը։

Ըստ ՀԶԿ կանխատեսումների՝ մոտ ապագայում զբոսաշրջիկների թիվը կգերազանցի 1 մլրդ մարդ սահմանագիծը, իսկ 2020 թ. կհասնի 1 մլրդ 600 մլն մարդու։ Համախառն եկամուտները միջազգային զբոսաշրջությունից 2020 թ. կկազմեն 3,5 տրիլիոն դոլար և կհամեմատվեն նավթի վաճառքի և ավտոարդյունաբերության եկամուտների հետ։ Ներկայումս զբոսաշրջության ներդրումը միջազգային տնտեսության մեջ 11% է կազմում, և զբաղվածների յուրաքանչյուր 15-րդը ուղղակիորեն կամ անուղղակիորեն ներկայացնում է զբոսաշրջությունը։ Զբոսաշրջության նպատակով կատարված ծախսերի առումով, ըստ վերջին տարիների միջինացված տվյալների, առաջին տեղում է ԱՄՆ-ն՝ 31 մլրդ դոլար, երկրորդ հորիզոնականը զբաղեցնում է Գերմանիան՝ 25,2 մլրդ դոլար, ապա Մեծ Բրիտանիան՝ 21 մլրդ դոլար, այնուհետև Ռուսաստանը՝ 7,1 մլրդ դոլար։ Ինչպես նշվեց, միջազգային զբոսաշրջության աճի տարեկան տեմպերը վերջին 20 տարվա ընթացքում կազմել են մոտ 6%, իսկ եկամուտների մասով՝ 13%։ Մասնագետների կարծիքով՝ 21-րդ դարը կդառնա զբոսաշրջության ժամանակաշրջան։ Տնտեսության մեջ զբոսաշրջության նշանակությունը հետևյալն է՝[3]

1) **Բաժնեմասը ՀՆԱ-ում.** ապահովում է Եվրոպայի ՀՆԱ 5%-ը, աշխարհի ՀՆԱ 3.6%-ը։

2) **Տարադրամի փոխանակումից ստացված շահույթ.** շատ երկրներում արտահանման ծավալ ապահովող առաջին հինգ ճյուղերից մեկն է, դրանց 38%-ում տարադրամի փոխանակումից ստացված եկամտի հիմնական աղբյուրը։

3) **Եկամտի աղբյուր.** ոլորտից ստացվող պետական եկամուտները կարող են լինել ուղղակի և անուղղակի։ Ուղղակի եկամուտներն առաջանում են զբոսաշրջության ոլորտում ստեղծվող աշխատատեղերից և գործող ձեռնարկություններից, ինչպես նաև ուղղակի գանձումներից, ինչպիսին են, օրինակ՝ մեկնումից ստացվող հարկերը։ Անուղղակի ներդրումներն առաջանում են այցելուներից ապրանքների և մատուցվող ծառայությունների համար գանձվող հարկերից և մաքսերից։

---

[2] Տե՛ս նույն տեղը։

[3] Տե՛ս ՀՀ զբոսաշրջության զարգացման հայեցակարգ, Եր., 2007 թ.։

4) **Արտաքին առևտրի դրական հաշվեկշիռ.** միակ ոլորտն է, որտեղ բոլոր զարգացող երկրների արտաքին առևտրի հաշվեկշիռը դրական է։

5) **Բազմարկչի էֆեկտ.** օժտված է հզոր բազմարկչային էֆեկտով և զարգացող երկրների համար տնտեսական զարգացման հիմնական աղբյուր է հանդիսանում։

6) **Համեմատական արժեք.** զարգացող երկրներում, որտեղ զբոսաշրջությունը տնտեսության գերակա ճյուղ է, ներդրումը ՀՆԱ-ում, զբաղվածության և արտահանումից ստացված եկամուտներում գերազանցել է ավանդական տնտեսական գործունեության ցուցանիշները։

7) **Աշխատատեղերի ստեղծում.** միջազգային զբոսաշրջության արագ զարգացումը նպաստել է մեծաթիվ աշխատատեղերի ստեղծմանը։ Այս բնագավառում կարող են ուղղակիորեն ստեղծվել աշխատատեղեր՝ հյուրանոցներում, ռեստորաններում, ժամանցի վայրերում, տրանսպորտային համակարգում և հուշանվերների վաճառքի կետերում, և անուղղակիորեն՝ զբոսաշրջության հետ առնչվող ձեռնարկություններում (սննդի, առևտրի, որոշակի ծառայությունների մատուցման)։

8) **Ներդրումների խթանում.** Հայաստան ժամանող զբոսաշրջիկների շնորհիվ երկրի վերաբերյալ ստեղծված դրական կարծիքը նպաստում է օտարերկրյա ներդրումների խթանմանը, որն իր ազդեցությունն է թողնում տնտեսության մյուս ճյուղերի վրա (արդյունաբերություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ, քաղաքաշինություն, կրթություն)։

9) **Աղքատության հաղթահարում.** նպաստում է տնտեսական գործունեության զարգացմանը և աշխատատեղերի ստեղծմանը նաև գյուղական համայնքներում ու տնտեսական զարգացման առումով անբարենպաստ այլ վայրերում։

Երկրի տնտեսական զարգացման կարևորագույն նախապայման հանդիսացող գործոններից մեկը բարենպաստ ներդրումային միջավայրի առկայությունն է։ Ներդրումները համախառն ամբողջական արդյունքի և ծախսումների հիմնական բաղկացուցիչ մասն են կազմում։ Մակրոտնտեսագիտության մեջ ներդրումը դիտարկվում է որպես համախառն ծախսերի բաղադրիչ, որն ունի հետևյալ կառուցվածքը.

- ծախսեր, որոնց նպատակը նոր արտադրամիջոցների ստեղծումն է,
- ծախսեր, որոնք կատարվում են նոր բնակարանային շինարարության համար,
- ծախսեր, որոնք ուղղվում են ապրանքային պաշարների համալրմանը։

Ներդրումները համազգային արդյունքի մասն են, որոնք չեն սպառվում ընթացիկ տարում և տնտեսության մեջ ապահովում են կապիտալի ու տնտեսական աճ։ Այս առումով կարևորվում է երկրի ընդհանուր ներդրումային գործընթացի բնութագրումը, ինչպես նաև մակրոտնտեսական ցուցանիշների վրա վերջինիս ազդեցության բացահայտումը։ Հատուկ ուսումնասիրության առարկա պետք է դառնան ներդրումների պարբերականությունը, որոշակի ժամանակահատվածում ծավալային աճի և նվազման պատճառները։ Զբոսաշրջության ոլորտում ներդրումներ կատարում են ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև միջազգային կազմակերպություններ։ Պետական ներդրումների հիմնական տեսակներից են վաճառքով կամ վարձակալական հիմունքներով հողի կամ ենթակառուցվածքների՝ շուկայականից ցածր գներով տրամադրումը, հարկային արտոնությունները, հովանավորչությունը և այլն։ Սակայն պետք է նկատել, որ զբոսաշրջության ոլորտում ներդրումները մեծ ռիսկ են պարունակում, քանի որ բնագավառը զգայուն է տնտեսական, քաղաքական, կլիմայական և այլ փոփոխությունների նկատմամբ և դրանով իսկ կարող է խիստ կրճատել զբոսաշրջիկների հոսքն ու ստացվող եկամուտները։ Ուստի պետությունը պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկի այստեղ ներդրումների ներգրավման համար։ Ինչ վերաբերում է միջազգային ներդրումներին, ապա հիմնական վարկատուն Համաշխարհային բանկն է, որի գործունեությունն ուղղված է զարգացող երկրներում նորմալ կենսամակարդակի ապահովմանը։ Դա կատարվում է ենթակառուցվածքներին երկարաժամկետ փոխառությունների տրամադրման միջոցով։ Այս բանկը խրախուսում է այնպիսի հաստատությունների գործունեությունը, որոնք ապահովագրում են

մատակարար երկրների պարտքերը, երաշխավորում մրցույթով ընտրված, համեմատաբար մրցունակ մատակարարներին: Ի տարբերություն Համաշխարհային բանկի, Միջազգային զարգացման ասոցիացիան տրամադրում է կարճաժամկետ վարկեր: Զբոսաշրջության ոլորտում ներդրումների հիմնական ռիսկի գործոնը կապիտալի տարողունակությունն է: Դա պայմանավորված է շինությունների և սարքավորումների բարձր գնով: Ժամանակի ընթացքում կապիտալը կուտակվում է շատ դանդաղ, և ներդրված միջոցների վերադարձը նույնպես դանդաղում է: Հետևաբար՝ առաջնակարգ խնդիր է համարվում կապիտալի արժեքի իջեցումը: Հայաստանը, որպես ձեռներեցության և ներդրումների համար կայուն և ապահով պայմաններ առաջարկող երկիր, հետաքրքրում է զբոսաշրջիկներին, հարուստ է պատմամշակութային ու բնական ռեսուրսներով, համաշխարհային զբոսաշրջության շուկայում մրցունակ արտադրանք և բարձրորակ ծառայություններ առաջարկելու մեծ ներուժ ունի:

Ներկայումս զբոսաշրջության բնագավառում տնտեսավարող սուբյեկտների մեծ մասը փոքր և միջին ձեռնարկություններ են, որոնց կարողությունները սահմանափակ են ոլորտում զգալի ներդրումներ կատարելու համար: Այս առումով ներդրումների խրախուսման, շարժառիթների, հնարավորությունների, փաստացի ու հուսալի տվյալների տրամադրման միջոցով աջակցություն պետք է ցուցաբերվի հնարավոր ներդրողներին: Անհրաժեշտություն է զգացվում բարեփոխումներ իրականացնելու նաև իրավական դաշտում, մաքսային, երկարաժամկետ գործարարության վարկերի համակարգերում: Ձեռնարկությունները պետք է թափանցիկ և բարենպաստ միջավայրում գործելու հնարավորություն ունենան, որի հիմքում հստակ քաղաքականության և իրավական դաշտի ապահովումն է: Ոլորտում պետական և մասնավոր ներդրումների ներկայիս մակարդակը բավական ցածր է տարածաշրջանի այլ երկրների համեմատությամբ, և եթե Հայաստանը դիտարկում է մրցունակ լինելու հնարավորությունը, ապա դրանք պետք է ավելանան:

Մինչև 2030 թ. գործարար և ներդրումային միջավայրում նախատեսվում է ունենալ հետևյալ պատկերը.

1) Տնտեսավարող սուբյեկտները կգործեն ձեռնարկատիրության և ներդրումների համար նպաստավոր պայմաններում: Վարչարարությունը կլինի թափանցիկ: Աշխատանքային օրենսդրությունը նպաստավոր կլինի զբոսաշրջության ոլորտում կես դրույքով և սեզոնային աշխատողների համար: Կբացառվեն կաշառակերությունը և բյուրոկրատական քաշքշուկները:

2) Զբոսաշրջության կազմակերպման համար որպես օրենսդրական հիմք կծառայի «Զբոսաշրջության մասին» ՀՀ նոր օրենքը, որը հիմնված կլինի միջազգային լավագույն փորձի, եվրոպական չափանիշների և ազգային առանձնահատկությունների վրա:

3) Կառավարությունն ամեն կերպ կնպաստի ոլորտի զարգացմանը՝ բանկային երաշխիքների, դրամաշնորհների ու ցածր տոկոսադրույքով վարկերի միջոցով քաջալերելով ներդրումները: Բանկային համակարգը ցածր տոկոսադրույքով ֆինանսական միջոցներ կհատկացնի փոքր և միջին ձեռնարկություններին: Երկու տարին մեկ անգամ կհրապարակվի ուղեցույց ներդրումների համար նպաստավոր ոլորտների, ներդրումային միջավայրին վերաբերող պետական քաղաքականության մասին: Ներդրումների հնարավոր աղբյուր կդիտարկվի Սփյուռքը:

4) Տնտեսավարող սուբյեկտներին կաջակցեն վերջիններիս միավորող ոչ առևտրային կազմակերպությունները, որոնք կներկայացնեն իրենց անդամների շահերը, կրթական հաստատությունների հետ համատեղ մենեջմենթի, աշխատուժի կառավարման և այլ թեմաներով դասընթացներ կկազմակերպեն զբոսաշրջության և սպասարկման ոլորտի աշխատակիցների համար: Խորհրդատվական և ուսուցողական ծրագրեր կգործեն սկսնակ

ընկերությունների համար։ Տնտեսավարող սուբյեկտները կօգտագործեն ժամանակակից տեխնոլոգիաներ։

Արդյունքում՝

1) զբոսաշրջության մասնաբաժինը հանրապետության համախառն ներքին արդյունքում կկազմի 12%,

2) ոլորտը կընդգրկի երկրի արտահանման ծավալների 23.8%-ը,

3) միջազգային զբոսաշրջային այցելություններից ստացված եկամուտը կկազմի 3 մլրդ ԱՄՆ դոլար՝ 2009 թ. գներով զբոսաշրջությունից ստացված եկամուտների տարեկան 11% աճի պայմաններում,

4) զբոսաշրջության արտաքին առևտրի հաշվեկշիռը կշարունակի մնալ դրական,

5) կապիտալ ներդրումները կկազմեն 535.3 մլն ԱՄՆ դոլար կամ ընդհանուր ներդրումների 12.3%-ը[4]։

6) կապահովվի 22300 աշխատատեղ՝ կազմելով ընդհանուր զբաղվածության 2.0%-ը[5],

7) աշխատանքային պայմանները կհամապատասխանեն միջազգային չափանիշներին, կբարձրանա միջին աշխատավարձի չափը։

Ներդրումային քաղաքականությունը ՀՀ ընդհանուր տնտեսական քաղաքականության բաղկացուցիչ մասն է և դիտարկվում է որպես տնտեսական զարգացման կարևորագույն միջոց։ Նպատակաուղղված է ներդրումային և գործարար բարենպաստ միջավայրի ձևավորմանը, կարգավորող միջավայրի թափանցիկության ավելացմանը, երկրի մրցակցային առավելությունների բացահայտմանը, երկրում կատարվող ներդրումների ծավալների մեծացմանը, շուկայական ենթակառուցվածքի զարգացմանը, ըստ այդմ՝ տնտեսական զարգացման խնդրի լուծմանը։ Ներդրումային նպատակաուղղված քաղաքականության մշակմամբ և արդյունավետ իրականացմամբ է մեծապես պայմանավորված երկրի արդյունաբերական և գիտատեխնիկական զարգացման հետագա ընթացքը։ Ինչպես բոլոր զարգացող երկրներում, Հայաստանում ևս ներդրումների աճը կլուծի մի շարք կարևորագույն խնդիրներ, ինչպիսիք են՝ աշխատատեղերի ստեղծումը, շուկայական տնտեսությանը հատուկ նոու-հաուների ներգրավումը (ընդհանուր և ֆինանսական կառավարում, շուկայավարում, նոր տեխնոլոգիաներ, հմտություններ և այլն), նոր շուկաների բացահայտումը, այդտեղ մուտք գործելու հնարավորությունների ընդլայնումը և այլն։

Հայաստանի Հանրապետությունը ներդրումների նկատմամբ հայտարարել և իրականացնում է «բաց դռների» քաղաքականություն, որն ամրագրված է օրենսդրության մեջ, մասնավորապես՝ 1994 թ. ընդունված «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքով, 2005 թ. հաստատված «ՀՀ ներդրումային քաղաքականության» հայեցակարգով և տնտեսական ոլորտը կարգավորող իրավական ակտերի ներդրումներին վերաբերող այլ դրույթներով։

Հայաստանի Հանրապետության ներդրումային քաղաքականության հիմնական սկզբունքներն են[6].

- ազատական տնտեսավարում,
- համապատասխան օրենսդրության գրավչության և կայունության ապահովում,
- արտասահմանցի և տեղացի ներդրողների համար տնտեսավարման հավասար պայմանների ստեղծում,
- օրենքի սահմաններում ներդրողների շահերի պաշտպանություն։

Բարենպաստ ներդրումային միջավայրի ձևավորման, օտարերկրյա և տեղական ներդրումների ծավալների մեծացման նպատակով կարևորվում է վարչարարական խոչընդոտների հաղթահարման խնդրի լուծումը։ ՀՀ-ում ներդրումային միջավայրի բարելավման և դրանց խթանման նպատակով կատարվում են մի շարք քայլեր։ Այսպես՝

---

[4] Աղբյուրը՝ Համաշխարհային ճանապարհորդության և զբոսաշրջության խորհրդի տվյալները, 2010 թ.:

[5] Նույն աղբյուրը:

[6] Տե՛ս **Ա. Աղազարյան,** Զբոսաշրջության տնտեսագիտություն, Եր., 2008 թ.:

- Տնտեսության տարածքային անհավասարակշիռ զարգացումից խուսափելու համար մարզերում իրականացվում են նպատակային միջոցառումներ՝ տնտեսական ենթակառուցվածքների կապի և հաղորդակցման զարգացում, խթանման և աջակցման արդյունավետ համակարգի ստեղծում, տարածքային զարգացման համալիր ծրագրերի մշակում։
- Հաշվի առնելով օտարերկրյա ուղղակի ներդրումների ժամանակակից միտումները՝ գիտատար ճյուղերում ներդրումների կշռի մեծացումը, քայլեր են ձեռնարկվում էապես փոփոխելու երկրի մրցակցային առավելությունների կառուցվածքը՝ նպատակ ունենալով նվազեցնելու բնական ռեսուրսների, էժան աշխատուժի օգտագործումը, միևնույն ժամանակ որոշիչ դարձնելով ստեղծված ակտիվները, ինչպիսիք են՝ բարձրորակ մասնագետները, գիտահետազոտական կառույցները, զարգացած ենթակառույցները։ Առանձնակի ուշադրություն է հատկացվում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների զարգացման և դրանց լայնածավալ կիրառման վրա, որը ներկայումս երկրի մրցակցային առավելությունների բարելավման հիմնական ուղղություններից է համարվում և ռազմավարական նշանակություն ունի։
- Սփյուռքի հետ ավելի ուղղորդված և ակտիվ համագործակցություն՝ երկուստեք վստահելի և շահավետ միջավայրի ձևավորում։
- Միջազգային չափանիշներին համապատասխան ապահովագրական համակարգի ձևավորում՝ ներդրումները հնարավոր ռիսկերից ապահովագրելու համար։